

զուտ պ. խմբագրերը մեղադրում է «Մշակին» անժամանակակից խնդիրներ բարձրացնելու մէջ: Զատում ենք որ պ. Գրիգորյանի քաջ է զգում իրան միայն այն դէպքերում, երբ դիտէ թէ իր մեղադրանքների անհիմն լինելը ապացուցանելու համար (որ հեշտ կարելի էր) պայմանները նպաստաւոր չեն այժմ: Կարծեմ, իբրեւ խմբագիր, նա հասկանում է թէ ինչ ենք ուզում ասել: Միայն մի բան ցանկանում ենք յիշեցնել պ. Գրիգորյանին: արդեօք նա հաւատում է որ մարդկութիւնը որպիսի է իցէ քայլերով՝ դարձնելով դէպի կատարելութիւն է դիմում, հաւատում է որ ներկայումս անգամ անքնական համարված երեւոյթները, գուցէ մերձաւոր ապագայում իրանց լուծումը պէտք է ստանան: Զատում ենք, որ պ. Գրիգորյանին չէ ճանաչում ժողովուրդը, չէ ապրել նրա մէջ, ուստի և անտեղեկ է ժողովրդի մէջ այս կամ այն խնդրի մասին կազմված գաղափարին: Պէտք է ժողովրդի մէջ անեն, նրանից տեղեկութիւններ ժողովել, որպէս զի հասկանալով թէ ժողովուրդը ինչ կարծիք է: Մենք կարող էինք մեր ասելիքը հաստատելու համար պերճախօս օրինակներ մէջ բերել, բայց, որովհետեւ գիտէք, որ չենք կարող այդ անել, միթէ ձեր կողմից անաշուտութիւն չէ, պ. Գրիգորյանին, հարցեր բարձրացնելը, որոնց պարզաբանելը չէ կարելի: Ձեզդէմները առհասարակ գոռում են թէ «Մշակը» համակրողները նոր մարդիկ են, որոնք չեն յիշում «Մշակը» անցյալում պաշտպանած վնասաւոր հարցերը, բայց կարող ենք միտադրանք անել, որ նոյն իսկ «Մշակը» հիմնադրու օրից սկսած ոչ մի սող չենք թողել առանց ընթերցանութեան: Տասնեակ տարիների ընթացքում ինչ որ կատարվել է մեր մասով մէջ՝ անյայտ չէ մեր, և յուսալից չենք թէ մի օր հնար կը լինի մեզ տպագրել ոչ թէ թուով, այլ զբաղական փաստերի վրա հիմնված յիշողութիւններ: Առ այժմ ուրախ ենք որ «Արձագանքը»՝ որի սովորութիւնն էր միշտ երկդիմի դիրք բռնել և կ'էր ծառայողութեանը թող փնէլ պարզամիտների աչքը, այժմ ներկայանում է մեզ առանց դիմակի և հայ երիտասարդութիւնը առիթ ունի տեսնելու այդ թերթի խմբագրին իր թիւում և փոստ հասցեով: «Մշակը» անկարող է մի առ մի թվել այն հարցերը, որոնց նա բարձրացրել է: Բայց հայ երիտասարդը չէ մոռնում այն յօդուածները, որոնք նուիրված են եղել բոլորիս համար նուրազանքների... «Մշակը» հակառակորդների տարաբանեցում է, որ պարզ հայը համակրում է «Մշակին» և նրանք ցանկանում են արգելել այդ համակրութեան արտայայտութիւնը: Բայց իմացե՛ք որ հայ ժողովուրդը և երիտասարդութիւնը «Մշակին» անկեղծօրէն և զիտակցաբար է համակրում:

Մի քանի երիտասարդներ

էր հայր-տեղի, Ալիշանի ոգին: Դպրոցն ուսումնասիրած լինելով, կարելի էր գաղափար կազմել և նրա ղեկավարի ուղղութեան, բնաւորութեան ու լայն համամարդկային գաղափարների մասին: Ալիշանի անխաղաղ, համակրելի, անկեղծ բնաւորութիւնը, նրա լայն մարդասիրական և հայրենասիրական անձուկը հանգրուան կերպարանաւորվում էր դպրոցի թէ ամբողջութեան և թէ նրա իւրաքանչիւր մանրամասնութեան մէջ:

Ալիշանին միաբանութիւնը մի քանի անգամ էր առաջարկել արքայի պաշտօնը... սակայն նա երբեք չէր ընդունել այդ պատասխանատու պաշտօնը: Նախապատուելով զբաղվել իր գրքերով ու դպրոցով, գրական աշխատութիւններով ու մանկավարժութեամբ:

Բաժնայէլեան դպրոցը նրա ձեռքի տակ այնպիսի բարձրութեան էր հասել, որ համարվում էր ամբողջ Վենետիկում ամենալավ միջնակարգ դպրոց: Բաղմաթիւ խառնուրդ հարուստ ընտանիքների խնդրում, արդարւմ էին, որ դպրոցումն ընդունվէին իրանց զաւակները, սակայն միշտ մերժում էին ստանալ: Հայր Ալիշան միշտ պատասխանում էր որ դպրոցը միմիայն հայ զաւակներին կրթութեան համար է նշանակված, առանց խտրութեան հայ ազգութեանը պատկանող աշակերտները դասնութիւնների: Իմ ժամանակ կաթողիկէ աշակերտների մեծամասնութեան մէջ կային և լուսաւորական մի քանի երիտասարդներ և նոյն իսկ մի հայ բողոքական աշակերտ: Անուրանալի է որ Վենետիկի Միլիթարիստները թունդ կաթողիկէներ են, բայց նրանք այն աստիճան լուսաւորված մարդիկ են, որ երբեք չեն փոր-

ՆԱՄԱԿ ԱՍՈՍԻԱՅԻՑ

Ապրիլի 30-ին

Ինչպէս յայտնի է, մեր ուսուցչական խումբը վճռել է կարգաւ մի շարք ժողովրդական դաստիարակութիւններ: Երէկվան օրն էլ դաստիարակ ուսուցիչ Գրիգորյան Մարկոսեանց «Հարսանիքի» շուրջ ծախսերի մասին: Կարելի էր կայ բացառապարտ այդ ժողովուրդը միշտ անտարբեր էր դանդաղում և այս երրորդ անգամին էլ դպրոցական ընդարձակ դասընթաց փայլում էր իր դատարկութեամբ, ներկայ էին ուսուցիչներ և երկու տասնեակ միջին դասակարգի երիտասարդներ: Գուցէ ժողովուրդը չէ էլ լսում և չէ հասկանում հասարակ դասակարգը դժուարանում է մոտքի համար տան կոպէլ վճարելը, վերջապէս այս թէ այն, պէտք է հասկանալ նրան, ընդհանրացնել դաստիարակութեան նպատակը, օգտակարութիւնը, հետաքրքրել և մատչելի անել: Այսպէս, մենք կը նկատենք դաստիարակներին, որ պատերին կպցրած յայտարարութիւններից ժողովրդի մեծամասնութիւնը ամենից տեղեկութիւն էլ չէ կարող ունենալ, ուստի հարկաւոր է, նախ՝ եթէ ոչ եկեղեցիներում ծառայողներով, զոնէ՛ մասնաւոր հրաւիրակներով, զրկել ուստարաշխիւրին, բացառելով դաստիարակութեան նպատակը, նրա ծրագրերը, խնդրելով յայտնել իր համբարին ներկայ լինելու: Երկրորդ՝ մոտքի վճար չը պահանջել և երրորդ՝ որոշել դաստիարակութեան ժամը ոչ թէ ճիշդ 12-ին, այլ ուղղակի պատարագի ժամերգութիւնից յետոյ, ուրովհետեւ մեր հասարակ ժողովուրդը սովորաբար ճաշում է կէսօրին, ուրեմն, նա 12 ժամին շտապում է տուն իր գերդաստանի հետ, զոնէ՛ կիրաւի էր, միտքին ճաշելու: Միւս կողմից խորհուրդ ենք տալիս մեր յարգելի դաստիարակներին, որ դաստիարակութեան նիւթը զնտրեն խնամքով որ հասկանալի լինի հասարակ ժողովրդի համար, որ լաւ ուսումնասիրեն և հաստատ քայլերով ամբիշտ բարձրանան: Ժողովուրդը՝ ԽՈ-եր, թէ-եր, հակառակութիւններ չէ սիրում, նա ասելի հաւատ է հաստատ համոզմունքից, ենթադրութեամբ խօսելը կասկածի է ենթարկում, հետեւաբար խօսքի արժէքը ստորացնում: Նոյն խորհուրդ համարձակվում եմ տալ և պ. Գրիգորյան Մարկոսեանին, եթէ կրկին անգամ առիթ ունենայ դաստիարակութեան ջորորդը դաստիարակութիւնը լինելու է մայիսի 6-ին դաստիարակութեան և ուսուցիչ Մ. Մուրադեան «Մամուլի և գրականութեան մասին»:

Բ.

ձուռն ու է ճնշում գործել իրանց դպրոցում ուսանող այլակրօն հայ երիտասարդների վրա և դարձնել նրանց կաթողիկէ: Եւ ես համոզված եմ որ այդ համաբնորոգութեան ոգու գլխաւոր գրօշակակիրը միաբանութեան և դպրոցի մէջ՝ ինքն հայր Ալիշանն էր:

Հայր Ալիշանը յայտնի է բոլոր հայերին, ամբողջ մարդկութեան՝ որպէս ուսումնական մարդ, որպէս գրող և բանաստեղծ:

Մեզանից ով չը գիտէ, չէ կարդացել նրա բազմաթիւ գրուածքները, կամ զոնէ՛ նրանց մասին լռեալ...

Հարկ չեմ համարում այստեղ մի առ մի թվել նրա բազմաթիւ և համակրելի երկասիրութիւնները վերնագրերները:

Բայց գուցէ շատերը չը գիտեն, որ Ալիշան խնդրի մանկավարժ էլ է: Մայրենի լեզուն նրա ձեռքով դեկավարած դպրոցի ուսմունքների հիմքն էր կազմում, հայրենագիտութիւնը դպրոցի բոլոր ուսմունքների ոգին էր...

Երբ ես մտնում էի դպրոցի այն մեծ դահլիճը, որտեղ աշակերտները դադարում էին նկարչութեամբ՝ ես ապշած էի մնում: Հայր տեսուչը պատուիրել էր նկարչութեան ուսուցչին, որ աշակերտները մեծ մասամբ նկարէին հայոց պատմութեան հետ սերտ կապ ունեցող և երկխանքի վառ երևակայութեանը գլխաւորապէս հայրենիքը յիշեցնող դէպքեր և տեսարաններ... Մի տեղ տեսնում էիք վարդան Մամիկոնեանի ընդօրինակած կենդանագիրը, մի ուրիշ տեղ՝ Անիի ասեղախնայի տեսարանը, և այլն և այլն...

Եւ առհասարակ, որպէս մանկավարժ, հայր Ա-

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Կաղզում, 25 ապրիլի

Ձեր պատուական լրագրի 41-որդ համարում մի թղթակից հարցրելով Կաղզումում բացված Բարեգործական ընկերութեան ճիւղի մասին, աւելացնում է, որ անդամների թիւը հետզհետեւ պակասում է, որովհետեւ վարչութիւնը կամայականաբար ջնջում է ցուցակից ժողովներին չը մասնակցող անդամներին: Որպէս վարչութեան նախագահ հարկ եմ համարում յայտնել, որ պլանտուն միանգամայն սխալ բացատրութիւն է տալիս անդամների պակասելուն: Ոչ մի անհամ ժողով չը գալու պատճառով ցուցակից ջնջված չէ, և եթէ պլանտուն անգամ է (գուցէ ջնջվածների թւից), ապա պէտք է գիտենայ, որ կանոնադրութեան § 15 դրութեամբ միայն 4 անգամ տարեկան վճարը չը ներկայացնողները ջնջվում են անդամների ցուցակից և այլապէս ոչ մի դիպուածում:

Իսկապէս անդամների թիւը զգալի կերպով պակասել է այն պատճառով, որ շատերը, անհամ գրվելով, հեռացան Կաղզումից, չը վճարելով, ի հարկէ, անդամակցական վճարը, մի քանիսը ջնջվեցան յիշալ § 15-ի դրութեամբ, մէկը հեռացաւ անդամակցութեանց վերադարձելով որ իրան տեղիս ուսումնասիրել վարժապետ շնորհեցին, հեռացաւ ոչ մի կոպէլ չը վճարելով: Միով բանով կրկնվեց մեզ հայերիս յատուկ անտարբերութիւնը, ինդիֆերենտիզմը դէպի հասարակական հիմնարկութիւնները: Ամեն տեսակ ընկերութիւններ՝ բարեգործական թէ ուսումնական, ամեն տեսակ գործեր մեղանում միշտ աղմուկներով են սկսվում և ապա կամայ կամայ այս հիմնարկութիւնները, այս գործերը սկսում են նուազել անդամների կամ համակրողների թիւով: Գործունէութեամբ և վերջապէս հասնում են կատարելալ մեռելային դրութեան: Օրինակներն առաջնորդ են՝ նոյն իսկ Բարեգործական ընկերութիւնը, թարգմանական ընկերութիւնը, թատրոնը և այլն, և այլն: Չեմ կարող այստեղ առանձնապէս չը չեղան տեղիս ընկի հասարակութեան զարմանալի անտարբերութեան վրա դէպի ամենայն տեսակի ազգային, հասարակական հիմնարկութիւնները: Սկզբնական 42 անդամներից միայն 5 տեղացիք էին, մնացեալները օտարերկրացիք: Որքան աշխատեցի ժողովներում բացատրել ընկերութեան օգուտները, համոզել որ մասնակցեն, քանի որ ամբողջ եկամուտը գնում է Կաղզումի դպրոցին, Կաղզումի չքաւորներին, աղքատներին օգտին, — չնչով չը կարողացայ դրանով Կաղզումացիներին ուսուցրութիւնը: Երկար ժամանակ ընտելելով կարելի նահանգում ես նկատել եմ որ այստեղ, առաւել քան այլ հայաբնակ տեղերում, հոգեւորականութիւնը մեծ ազդեցութիւն ունի ժողովրդի վրա, մանաւանդ գիւղերում, գիւղաքաղաքներում:

Լոնդը փորձված և խելացի մանկավարժ է: Նրան է պարտական դպրոցը հետեւեալ բուն մանկավարժական խելացի կարգադրութեամբ, դպրոցում գիշերօթիկ աշակերտները չունենին մի ընդհանուր նշանաւոր, նրանց արդիւնք էր միասին քննալ իւրաքանչիւր աշակերտ պատկում էր ջուկ խուցում, իւրաքանչիւրը իր համար ջուկ փոքրիկ սենեակ ունէր: Միայն երկու հարազատ եղբայրներին թող էր տրվում մի և նոյն սենեակում միասին քննել:

Վեց ամիս շարունակ հայր Խնամատիտից շաբաթը չորս անգամ դասեր առնելուց յետոյ, երբ հասաւ Վենետիկ թողնելու օրը, ես կրկին դիմեցի հայր Ալիշանին, խնդրելով որ դպրոցի օգտին ընդունէ ինձանից դասերիս վարձը: Բայց բոլոր թխախնայներս զուր էին, — հայր Ալիշանը ոչինչ կերպով չէր ուզում ինձանից փող ընդունել:

Ճարահատված, քաղաքից իմ դուրս գալուց մի քանի օր առաջ, գնեցի գրաւմատանոցում ֆրանսիական կլասիկների ժողովածուն և ընծայեցի Բաժնայէլեան դպրոցի գրադարանին, որպէս զի զոնէ մի կերպ արտայայտեմ իմ երախտագիտութիւնս սուրբ հայրերին նրանց սիրալիլ ընդունելութեան, հիւրասիրութեան և վեց ամիս շարունակ ինձ տուած դասերի համար:

Հայր Ալիշանի հետ վեց ամիս ընթացքում բաւական ժամեր ծանօթութիւն կապելով ես մի անգամ առիթ էի ունենում նրա հետ մտերմաբար խօսել ընդհանրապէս մեզ հետաքրքրող

եթէ Կաղզումում լինէր լաւ, կրթված քահանայ — ես համոզված եմ որ հնարաւոր կը լինէր, ոչ թէ 30, այլ 80 անդամից բաղկացած ընկերութեան ճիւղ հաստատել: Անկիրթ, կոպիտ միակ անգամ տեղական տեղեւ ժողովրդի առաջ ոչինչ համարմունք չունեցող քահանաները ինչ կարող են անել... Խրթին գրաբարով գրված շրջաբերականներով, գործունէութիւնը սահմանափակվում է «եկից և մոլից» մատենաները լցնելով, իսկ կենդանի խօսք, բարոյ, ինչպէս հարկաւոր է հասարակ ժողովրդի համար, բնաւ չը կայ: Եւ ինչու պարմանալ, որ Կաղզումի նման տեղերում ընկերութիւններ և դպրոցներ առաջ չեն գնում:

Բժ. Գեորգ Կաճկահեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պարտաւորութիւն ենք համարում յայտնել հայ հասարակութեանը, որ հայր Ալիշանի յիշատեալ յօդուածն առիթով հեռագիր, ուղղի՞ճ կամ նամակ գրել ուղղորդել պէտք է դիմեն «Բազմաբան» խմբագրութեանը հետեւեալ հասցեով: Rédaction de la Revue «Bazmavep», Venise St. Lazare (Benetia).

Հայոց Բարեգործական ընկերութեան Թէլուի ճիւղի վարչութեան նախագահը խնդրում է մեզ տպել որ ապրիլի 21-ին Թելուի կլուբում յօդուած ընկերութեան եղած պարահանդէսից դուրսացած ընդհանուր մուտքը եղել է 318 ր. 15 կ., իսկ ծախար 183 ր. 72 կոպ., ուրեմն զուտ արդիւնք մնաց 134 ր. 43 կ., որ և յանձնվեց ընկերութեան ճիւղի գանձապահին: Ճիւղի վարչութեան նախագահը յայտնում է իր հորհակալութիւնը իշխանաւոր Մակաբիային, արիւն Զ. Բաղդոյեանին և օր. Մ. Եսաբեանին, որոնք յայնմ առանկանանց բուժեալ կառավարութիւնը:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ Ինչ գրում են, որ այդտեղ ցորենի պուրը ծախվում է այժմ 70—75 կոպէկով, գարին՝ 40—42 կոպէկով: Թղթակիցը հաղորդում է, որ անձրևները առատ են և հողագործներից շատերը վարուցանքն աւարտել են արդէն:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ Գետնաւոր են հարցրում մեզ. «Բարեգործական ընկերութեան ճիւղը հիմնվեց այստեղ անցեալ տարին և չը նայելով քաղաքի փոքրաթիւ լուսաւորված դասին, ընկերութեան անդամների թիւը օրից օր չաւանդում է: Ամենքն էլ միմեանց խրախուսելով, աշխատում են եռանդով մտնել այդ գործի մէջ: Ընկերութեան դրամադուխը հասնում է մինչև 200 բուլլի»:

ԿԱՐՄԻՑ Ինչ գրում են, «Այստեղ կազմված է առողջական մասնաժողով, բայց նկատի առնելով

հարցերի մասին:

Անկախած Ալիշանի հետ խօսողը կը համոզվի որ նա կաթողիկէութիւնից դուրս հայոց ազգի համար փրկութիւն չէ տեսնում: Բայց անկողմնապահ և համբերող ժամանակակից ոգի ունեցող մարդը շատ լաւ գիտէ որ և լուսաւորական հայը՝ լուսաւորական եկեղեցուց դուրս հայերի համար ոչինչ փրկութիւն չէ տեսնում, իսկ բողոքականը բողոքականութիւնից դուրս փրկութիւն չէ տեսնում...

Ուրեմն թող ամեն մարդ ունենայ այդ համոզմունքները և թող մի և նոյն ժամանակ Ալիշանի պէս պայծառ, լայն, ընդհանրապէս մարդասեր գաղափարներ ունենայ, նրա չափ հայրենասիրութիւն ունենայ, — և այն ժամանակ անձնական հայացքները իւրաքանչիւր դաստիարակումը պատկանողի կողմից՝ ոչինչ փոստը չեն ներկայացնի ընդհանրութեան համար, ոչինչ երկպառակութեան սերմեր չեն գցի տարբեր կրօնական հայ յեռացքներ ունեցող մարդկանց մէջ, երբ նրանք այդ հայեացքներից բարձր կը դասեն ընդհանրապէս ազգը սիրելու զգացմունքը:

Այդ տեսակ լայն հայեացք մենք կարող ենք սովորել Վենետիկի Միլիթարիստներից, մասնաւոր Ալիշանի պէս համոզված մարդուց: Կարող է Ալիշանի պէս չլքւմ, նոյն իսկ մոլեռանդ կեղծով սիրել իր կրօնը, բայց մի և նոյն ժամանակ պէտք է Ալիշանից օրինակ առնել թէ դէպի ուրիշ դաստիարակները նրա ունեցած լայն համբերողութեան ոգուն և թէ հայրենասիրութեան նրա անսահման և անձուկը զգացմունքից...

ԳԻՐԳՈՐ ԱՐՄԻՐՈՆԻ

քաղաքի անյարմար շինութիւնները, զրեթէ անհնար է մաքրել այս կեղտոտ քաղաքը: Տներն մեծ մասը չունեն արտաքին քանդակներ, իսկ աւերակներն ու զանազան անկիւնները՝ անմաքրութեան բուն են: Բայց մասնաժողովի աշխոյ գործունէութեան հաւասարակ ժողովուրդը պատրաստ է բարձրագոյն խնամքով խնամել իր քաղաքը: Եւ ինքն իր օրով պատրաստ է ամեն տեղ աղբախոյ չլինել, եթէ գիտենայ որ անպատիժ կը մնայ:»

ԿԱՐԱՅԻՑ մեզ գրում են, որ այդ քաղաքում չունեն սպասում են վրաստանի սրբազան էկզարխի գալուստը:

Մեզ գրում են Կարսից հետեւալով. «Տեղիս հայոց ուսումնարաններն իրականում դուրսը չառնող ծառայել են. ուսուցիչներն վճարելու դրամ չը կայ: Բայց այդ մասին մանրամասն կը գրեմ յայտնի նամակով:»

«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է մեզ, որ մայիս ամսի վերջերս սպասվում է մայրաքաղաքում Չինոգորիայի իշխանը:

Կարգիւններ հաղորդում են, որ ներքին գործերի միջնորդութեան մէջ քննարկ է բարձրագոյն երկրագործական դպրոցների կազմակերպութեան հարցը:

«НОВОСТИ» լրագիրը հաղորդում է, որ ենթադրութիւն կայ ներկայ գարնան փորձ փորձել Ղրիմում և Սև ծովի ափերում գտնված մի քանի այլ տեղերում թէ ամերիկական և թէ ասիական տեսակի բամբակի սերմերը ցանկու:

ՊԵՏԵՐԲՈՐԳԻՑ գրում են, որ Ֆիննլանդի միջնորդութիւնը հետեւալ տեղեկութիւններ է հաղորդել այս տարւոյ արմաղիների ցանքների մասին: Ապրիլի 25-ից մինչև ապրիլի 25-ը, Բոտանիկական, հարաւարմատեան նախաձեռնում, Բոտանիկական, Եւրոպայում և Ղրիմում աշխատանքները ընդհանրապէս շատ աշուղ էր: Մի քանի տեղերում միայն շատ անշան քիմիկատներ կրեցին ցանքները: Եւրոպական Ռուսաստանի միջնորդութեան տարածութեան վրա ցանքները շատ աշուղ են:

Ներքին գործերի միջնորդութեան բժշկական դեպարտամենտը պետութեան բոլոր քաղաքների վրա սանիտարական վերահսկողութիւն ունենալու համար մի նախագիծ է մշակում, դիտարկութիւն ունենալով բոլոր տեղերում և ընդհանրապէս բնակած տեղերում սանիտարական զգուշացումները, որի մէջ ամեն անգամ տները բնակիչները սանիտարական անվանումներով վերաբերելու համար իրանց բոլորները պիտի գրեն, իսկ այդ բոլորները սանիտարական բժիշկների քննութեան պէտք է ենթարկուին:

Նախապէս հաղորդում են մայրաքաղաքի ուսումնական լրագիրները, որ այս տարւոյ պտղատու ծառերը Ղրիմում շատ առատ ծաղիկ են տալիս և երեւում է որ այս տարւոյ մրգերն մեծ առատութիւն կը լինի այդ կողմերում:

Ռուս լրագիրները գրում են, որ իտալական թագաւորութեանը, Օդեսա հանդիպում պէս, կը վերցնի իր ինկուզին Իտալիայի և այնուհետեւ կը շարունակէ ճանապարհորդել ներքին Ռուսաստանում իր իսկական, այսինքն իտալական թագաւորութեանը, վերադարձնելու պիտի անուանուի:

ԿԻՐՍԻՑ մեզ գրում են ապրիլի 26-ից հետեւալով. «Մի քանի օր շարունակ տեղացող անձրևներն հնարաւոր են արեւը, ջրամբարները հասնում էր 27 աստիճանի (Ռեմիտի)»: Նիժնի մայիսին ևս անձրև գալ, այս տարւոյ հունձը շատ առատ կը լինի: Մեղմանում առատութիւն է ամեն բանի: Մեծ քանակութեամբ են արտահանում «կարմիր», «սպիտակ» և «կապույտ» կոչված ձկնկեր: Ռուսիայից հեռու գտնվող հետեւալներն են. առաջին տեսակի հացի ֆունտը արժէ 3 1/2 կոպ., երկրորդ տեսակի՝ 3 կոպ.: Գառան մսի ֆունտը արժէ 10—11 կոպ., իսկ տաւարինը 8 կոպէկ: Աճառականութիւնը անմարմաններն վիճակի մէջ է:»

Գարունը հասնելուն պէս թափվում են Կարսի կողմերը թիւրքաց Հայաստանից բազմաթիւ հայ մշակներ: Մեզ գրում են յիշեալ քաղաքից, որ

անցեալ օրը, պատի վրայից ընկած քարը ջախջախել էր մի մշակի հայ մշակի ոտը: Այնուհետեւ տեսնելով վիրավոր ոտը ներկայացնում էր մի, ոտկորի և արիւնի մի անուրջ զանգուած: Ուրեմն դարձեալ վաղից մի գիւղացու օջախի դուռը, զգուշացու մի ամբողջ ընտանիքը, ևս այդ բոլորը որ և է օրական թշուառ 60 կոպէկի համար:

ԿԱՐԱՅԻՑ մեզ գրում են: «Վերջին ժամանակ մասնաւոր նամակները նորից սկսել են անկանոն կերպով հասնել մեր ձեռքը: Ըր գիտե՞ք որտեղից պատն է մեղադրւում Կարսի պատը, թէ այն քաղաքներն են, որտեղից ուղարկված են եղել նամակները: Մի բան միայն գիտե՞ք, որ այլ ևս չը պէտք է ուղարկենք և ստանանք 7 կոպէկ արժեքող հասարակ նամակներ, իսկ խաբարաշուր նամակ պատկերած (զակապոյ) նամակի ձեռք ուղարկել վճարելով 14 կոպէկ, մեղանք շատերն համար շատ ծանր է:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ:

Կապելէ, 24 ապրիլի
Ձեր լրագրի ընթերցողներն արդէն յայտնի կը լինի, որ քանի ժամանակից ի վեր է, ինչ անդրապատկերներն մի ընկերութիւն բացել էր այստեղ իր բանկային տան ձեռքը, Bank Oriental անուամբ, սակայն երկար չը տեսնէ և նրան յաջորդեց երկրորդը նորերում Bank Imperial անուամբ: Ի հարկէ, վերջինս աւելի հաստատ և համեմատաբար մեծ ընկերութիւն լինելով, հեռացրեց Պարսկաստանից առաջինը, վճարելով ահագին գումար յոգուտ նոյն ընկերութեան, և նա արդէն շարունակում է իր գործը: Ուրեմն վստահութեամբ կարելի է ենթադրել, որ բազմաթիւ ժողով է անդրապատկեր այդ կապիտալիստներն և նրանց սպասում է Պարսկաստանում մի փայլուն ապագայ, իրանց առջև բացված լայն ասպարեզում գործելու համար: Այս ընկերութեան իրաւունքներն անսահման Պարսկաստանի կուսակալն հանքերն ու անտառները, սրան է յանձնված նոյնպէս ծրարաւոր միջնորդութեան իրաւունքը:

Ի հարկէ, դրամական ոյժի և ընկերութեան պայմանների առջև տեղացիների որ և է ձեռնարկութիւնը և միջոցներն անոր կը մնան ապագայում. ի նկատի ունենալով նրանց ընդարձակ իրաւունքները, ինչն ըստ իրեան հասկանալի է, որ նրանք այս բնական հարստութեամբ լի երկրի հիւր ծնունդ, մի ուրիշի փշուրք միայն կը թողնեն առանց այդ էլ աղքատ Պարսկաստանի, և շարունակելով անկասկած, հեղհեղէն ձեռնարկել կը լինեն կողմնակի գործերի էլ, ինչպէս արտասահման զանազան ապրանքների արտահանումը, որը ներկայումս տեղացիների ձեռքումն է և իրանց միջոցով է կատարվում մեծ մասամբ: Յայտնի է, որ Պարսկաստանը արտադրում է մեծ քանակութեամբ ապրանքներ, օրինակ, աֆիօն, բամբակ, գորգեղէն, մետաքս և չոր մրգեղէն. առաջինների համար մեղք հրաժարվում ենք որ և կարծիք յայտնել, թողնելով այդ աւելի կարողներին:

Որովհետեւ Պարսկաստանի հայ վաճառականը գլխաւորապէս պարսկական է վերջինի (մրգեղէնի) առատութիւն, ուստի թող ներքին մեզ հետեւալ փոքրիկ նկատողութիւնն անել նրանց ընթացքի մասին:

Ձէ կարելի չը խոստովանուի, որ պարսկահայերի մէջ աւելի դարձացածները և հարուստները արտադրականներն են, այդ երեւում է նրանով, որ գոնէ սրանց մէջ է նկատվում փողը ի շատ մոտաւոր շարժում, սրանց ձեռքումն է և վաճառականութեան մի նշանաւոր մասը, սրանք են փոխադրում Ռուսաստան ներմուծվող մեծ քանակութեամբ սաքար, չիւրմանը, նուշ և այլն: Այսինքն ընկերութիւն վարձարեւ է սրանց, այս բարեկեցիկ բաղնիքներով, սակայն նրանք զրեթէ անփոյթ են վերաբերվում նախախնամութեան այդ պարզանքներն, որովհետեւ չունեն ներքին առևտրական մի կապ, կամ համեմատելի, որպէս զի դրա միջոցով շահին իրանք և շահն ամբողջ մարդկութիւնը, գործում են բաժանված ոյժերով, իւրաքանչիւրն իր հանգրիւն և հայեցողութեան համեմատ, քանի որ մէկը չէ ուզում ենթարկվել միւսի ազդեցութեան. կան, ի հարկէ, հմուտ և յարգելի վաճառականներ ևս, որոնք արժանի են իրանց բարձր նշանակման, սակայն ցածր է, որ արդարեւ

ներքին թիւը շատ սահմանափակ է: Մեր խօսքը գլխաւորապէս այն բաղադրանք է վերաբերում, որոնք զանազան միջոցներով ձեռք բերած մի համեմատ դրամաւորութիւնը մնում են վաճառականական ասպարեզը: Այդպիսիներն առհասարակ են անհեռաւորութեամբ, վաճառում են անհաշիւ, նրանց հոգ չէ, թէ այդ իրանց ընթացքը սպառնում է իրանց կործանմանը, մի և նոյն ժամանակ վաճառելով և վաճառականութեան. նրանք բաւականաւոր են լոկ հակերի թիւն աւելացնելով և փառաւորվում են տեսնելով հակերին դրոշմված իրանց անուան և ազդանուն սկզբնատուները: Այստեղ դարձեալ փայլում է հային յատուկ (եւր) և նրանք պատրաստ են ամեն բան զոհել այդ չարագուշակ (եւր) շահերու համար, և ինչ էք կարծում, ընթերցող, հետեւանք այն է լինում, որ մի քանի տարի առևտուրը քաջաշնչելով շարունակելուց յետոյ, մանկականով, թշուառութեան են մատնում իրանց ընտանիքների հետ և ուրիշ շատերին...

Վերջացնելով մեր խօսքը, ցանկալի կը լինէր, որ օգուտ քաղէին յարմար ժամանակից և քանի որ գործելու միջոց ունեն, համեմատելիութեամբ գործելով իրանց փոխադարձ շահերը զանազան ինտրիգաներից վեր դասէին, եթէ ոչ կը գայ ժամանակ, երբ օտարների ձեռքը կանցնի գործը և նրանք դուրս կը քշեն ձեռք ասպարեզից: Այն ժամանակ ոչինչ չի մնայ անելու, եթէ ոչ գանգատել:

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ

Սարմատ, ապրիլի 27-ին
Սարմատի հայերը դարձուր քնից զարթնելու փորձ են փորձում. արդէն կազմված բարեգործական ընկերութիւնը ահնիրն ապացոյց է դրան: Ընդհանրապէս վեր առած՝ Սարմատի հայերը առաջադիմներ մէջ, պէտք է ասած, ընդունակ են, և դրա գործնական ապացոյցը կը տեսնէ ամեն մարդ, եթէ փողը ի շատ ծանօթ լինի նրանց մարդ, եթէ փողը ի շատ ծանօթ լինի նրանց գործելու համար: Այս ընկերութեան իրաւունքներն անսահման Պարսկաստանի կուսակալն հանքերն ու անտառները, սրան է յանձնված նոյնպէս ծրարաւոր միջնորդութեան իրաւունքը:

Ի հարկէ, դրամական ոյժի և ընկերութեան պայմանների առջև տեղացիների որ և է ձեռնարկութիւնը և միջոցներն անոր կը մնան ապագայում. ի նկատի ունենալով նրանց ընդարձակ իրաւունքները, ինչն ըստ իրեան հասկանալի է, որ նրանք այս բնական հարստութեամբ լի երկրի հիւր ծնունդ, մի ուրիշի փշուրք միայն կը թողնեն առանց այդ էլ աղքատ Պարսկաստանի, և շարունակելով անկասկած, հեղհեղէն ձեռնարկել կը լինեն կողմնակի գործերի էլ, ինչպէս արտասահման զանազան ապրանքների արտահանումը, որը ներկայումս տեղացիների ձեռքումն է և իրանց միջոցով է կատարվում մեծ մասամբ: Յայտնի է, որ Պարսկաստանը արտադրում է մեծ քանակութեամբ ապրանքներ, օրինակ, աֆիօն, բամբակ, գորգեղէն, մետաքս և չոր մրգեղէն. առաջինների համար մեղք հրաժարվում ենք որ և կարծիք յայտնել, թողնելով այդ աւելի կարողներին:

Սարմատից հայերը մեծ յոյս ունեն Ռուսաստանից հայերի վրա:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

—Հռոմից հեռագրում են «Հիւսիսային գործակալութեանը»: որ Կրիսպի իտալական պարլամենտում ասեց հետեւալը. «Իտալական արտաքին քաղաքականութիւնը՝ պատերազմական չէ, այլ խաղաղական է: Դաշնակցների հետ կապված դաշնադրերը ունեն պաշտպանողական, բայց ոչ թէ յարձակողական բնուէրով: Իտալիայի գործառնութեան կազմակերպչական իրաւունքները իր նուաճումները կարողն ծովի ափերում գտնված երկրներում Իտալիայի և Անգլիայի մէջ գոյութիւն ունեցող կատարեալ համաձայնութիւնը Աֆրիկեան գաղութականութիւնների վերաբերմամբ շարունակվում է և դադարելու չէ:»

—Գննարկ Բուխարէ դիմելով մի հանրագրով իր ընտրողներին՝ զանազանում է այն թերահաւատութեան մասին, որով վերաբերվեցան նրանք դէպի իր անձնաւորութիւնը:

—Վիլհելմ Կայսրի և Բիսմարկի մէջ շարունակվում է գրադրութիւնը: Նամակները սուբհանդակներով են ուղարկվում:

—«Freisime Zeit» լրագիրը հաւատացնում է, որ իշխան Բիսմարկ սկսել է ի չար գործ անել ողբից խորհրդեր:

—Պրուսիայի ներկայացուցիչ Համբուրգում, Ֆոն-Կուսեբոլ հրաժարեցրած է իր պաշտօնից: Այդ դէպքը, ասում են, կապ ունի այս օրերս «Hamburger Nachrichten» լրագրում լոյս տեսած յօդուածների հետ:

—Սերբիայի նախկին թագաւոր Մլանը զանազանում է դրամական միջոցների պակասութեան մասին:

—«НОВОСТИ» լրագրին հեռագրում են Կանէս-յից, որ աղգային ժողովի համար կատարված ընտրութիւնները անփաւեր են ճանաչված:

—Ստէնլի այս օրերս ընդունվեց Վիկտորիա թագուհուց Վիկտորիան ամբողջում, որտեղ և ճաշեց:

ՄՇԱԿԻ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍՏՈՒՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ԿԵՐԻՍԻՑԻՑ, 3 մայիսի: Այստեղ հասան դերմանական կայսրը և կայսրուհին: Բնակարանում քննվում էր դիմաւորական օրինագիծը. կոմս Մոլոյէ ասեց իր ձառի մէջ, որ չը նայելով այն բոլոր խաղաղական հաւատարմութիւններն, որոնք անում են արտասահմանում, Գերմանիային անպայման հարկաւոր է հազար իր սեփական ապահովութեան մասին: «Որքան լաւ կը լինի պատերազմական ոյժը, ասեց Ֆելդմարշալը, և որքան նա աւելի յարմարեցրած է պատերազմի գործին, այնքան միւս պետութիւնները աւելի հակված կը լինեն դէպի խաղաղութիւն:» Իխտեղ յայտնեց որ հակվում է դէպի զինուորական ծառայութեան երկու տարւոյ ժամանակամիջոցը: Վիլհելմու առաջարկեց կազմել 27 անդամներից բաղկացած մի յանձնաժողով, որին յանձնարարած լինել խաղաղութեան ժամանակ գործի անհրաժեշտ թիւ հարցի ընտրութիւնը: Պատերազմական միջնորդ Վերդի-դիւ Վերնաւ յայտնեց, որ դաշնակց կառավարութիւնները պատրաստում են օրինագիծ գործի կազմակերպութեան մասին և որ այս բոլոր պէտք ունի զինվում չէ կարելի անել զինուորական ծառայութեան ժամանակամիջոցը պակասեցնելու մասին: Վիլհելմու թիւնների շարունակութիւնը յետագայում է մինչև ուղարկվում:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 3 մայիսի: Երեկ սերբիացի զինպան Սիլի-հրաժեշտի ողջոյնը մատուցեց թագաւոր Կայսրին:—Հրատարակված է Բարձրագոյն հրաման, ներկայ տարւոյ ընթացքում դադարեցնել Պետրովսկայա դիւանտեսական ակադեմիայում ուսանողների ընդունելութիւնը:—«НОВ. ВРЕМЯ» լրագիրը հաղորդում է, որ դիտարկութիւն կայ հովանաւորելու առևտրական նախաձեռնութեանը ուստաց դրօշակի տակ և նմանապէս առևտրական նախաձեռնութեանը Ռուսաստանում Յոյս կայ որ այդ հարցը հաստատ հիմքերի վրա կը դրվի:—Նոյն լրագիրը հաղորդում է որ Բ. Գուռը հրամանագրեց հեռացնել Ուսկուբից պաշտոնում գտնված բոլորական եպիսկոպոսներին և թիկնապահներով հասցնել նրանց Կ. Պոլս:—Նոյն լրագիրը լսել է որ հաստատված է Մոսկվայի պալատի կողմի կանոնադրութիւնը, որի նպատակն է՝ յարմարեցնել պահպանել Մոսկվայում ապրող և արտասահմանից Ռուսաստան եկող արևմտեան և հարավային սլաւոնների մէջ նմանապէս օգնութիւն հասցնել Ռուսաստանում ապրող սլաւոններին: Քաղաքական որ և է նրա պատակ կուրը չունի:—«НОВОСТИ» լրագիրը հաղորդում է, որ Պետերբուրգում դիտարկութիւն կայ հիմնելու դիւանտեսական ցանցները երաշտից ապահովանող ընկերութիւնը:

ՍՕՖԻԱ, 3 մայիսի: Պանիցայի գործի վերաբերեալ զինուորական դատարանը կը գումարվի վաղը, բայց proforno նիւտից յետոյ, դատաստանական քննութիւնը հաւանականաբար կը յետաձգվի մինչև երկուշաբթի: Այժմ բոլոր մեղադրողները պաշտպաններ ունեն: Պանիցայի համար հրաւիրված են երկու յայտնի փաստաբաններ:

Կ. ՊՕԼԻՍ, 3 մայիսի: Հրատարակված է իրադէ,

